

Հաշվետվություն

կատարված աշխատանքի մասին

(03.08.2020-03.11.2020)

1. Իրականացրել եմ Եվրասիական տնտեսական միությունում Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված երկաթուղային և ջրային տրանսպորտի ոլորտներին վերաբերվող փաստաթղթերի (նախագծերի, առաջարկությունների, նամակների, վերլուծական տեղեկանքների և հաշվետվությունների) նախապատրաստման և ներկայացման աշխատանքները:
2. Իրականացրել եմ Անկախ Պետությունների Համագործակցությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված երկաթուղային տրանսպորտին առնչվող, ինչպես նաև ընդանուր բնույթի փաստաթղթերի (նախագծերի, նամակների, վերլուծական տեղեկանքների և հաշվետվությունների) վերաբերյալ առաջարկությունների և եզրակացությունների նախապատրաստման և ներկայացման աշխատանքները:
3. Մասնակցել եմ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տարբեր հարթակներում կազմակերպված երկաթուղային և ջրային տրանսպորտի ոլորտներին վերաբերող քննարկումներին և հանդիպումներին (տեսակոնֆերանսների ձևաչափով):
4. Մասնակցել եմ երկաթուղային և ջրային տրանսպորտի ոլորտներին վերաբերող նորմատիվ իրավական և նորմատիվ տեխնիկական ակտերի ու գերատեսչական նորմատիվ ակտերի նախագծերի մշակմանը:
5. Մասնակցել եմ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ երկաթուղային տրանսպորտին վերաբերող հարցերի քննարկման և համապատասխան որոշումների ընդունման աշխատանքներին:
6. Մասնակցել եմ Նախարարությունում տեղի ունեցած երկաթուղային տրանսպորտի ոլորտին առնչվող խորհարդակցություններին, քննարկումներին և հանդիպումներին:
7. Մասնակցել եմ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ կնքված կոնցեսիոն պայմանագրի պահանջների կատարման հսկողության հետ կապված աշխատանքներին:

8. Իրականացրել «Նավագնացության մասին» Համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակման և ներկայացման աշխատանքները:

9. Կատարել են ղեկավարության կողմից տրված տարբեր տեսակի հանձնարարականներ, մասնակցել են վարչության առջև դրված խնդիրների լուծմանը, իրականացրել են այլ ընթացիք և չալանավորված աշխատանքներ:

Վարչության փորձագետ Վ.Հարությունյանի 03.08.2020-03.11.2020 թթ. ժամանակահատվածում կատարած աշխատանքը գնահատում եմ լավ:

Երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության պետ՝



/Ա.Մուսոյան

Երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության փորձագետ՝



Վ.Հարությունյան